

**Կարինե Ալբերտի Եղիազարյան, Քարմիլե Ալբերտի Եղիազարյան
(Երևան, Հայաստան)**

ՀՅԴԿՈՂՄԻՑ ՄԱՍՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՐՇԱՎԱՆՄԲԵՐԸ 1903-1904 ԹԹ.

Խանասորի արշավանքից (1897 թ. հուլիսի 25) հետո արշավախմբերի կազմակերպման հարցը քննարկվում է ՀՅԴ 1898 թ. ընդհանուր ժողովի նիստերում: Այդ առթիվ ընդունված որոշումն ապագա արշավանքների կազմակերպման հարցը կախման մեջ էր դնում ազատագրական պայքարի ՀՅԴ մշակած նոր մարտավարության խնդիրներից: Ուստի պատահական չէ, որ մինչև 1903 թ. այդ հարցում որևէ լուրջ գործընթաց տեղի չի ունենում:

Նոր արշավախմբերի կազմակերպման խնդիրը առարկայորեն դրվում է 1903 թ.-ից, երբ ակնհայտ է դառնում, որ Մասունը նորից պայքարի դրոշ է բարձրացնում: ՀՅԴ 2-րդ ժողովում ընդունված որոշումների համաձայն այդ պահին անհրաժեշտ էր օժանդակել Մասնո շարժմանը՝ կրկին դիմելով նաև արշավախմբեր կազմակերպելու պրակտիկային:

ՀՅ Դաշնակցության ջանքերով մարտական խմբեր հիմնականում կազմակերպվում են Գովաստու և Պարսկաստանում՝ Մալմաստի շրջանում: Մարտախմբերի կազմակերպման և զինման գործընթացն ավելի դյուրին էր, քան սահմանը անցնելը, քանի որ այն հսկվում էր ոչ միայն թուրքական ու քրդական զինյալների կողմից, այլև ռուսական սահմանապահ զորքերի կողմից, որոնք հարձակվում և մեծ հարվածներ էին տալիս հայ մարտիկներին: Այդ մարտախմբերից միայն Թորգոմի (Թուման Թումանյան) գլխավորած <<Սրբիկ>> հեծելախմբին է հաջողվում անկորուստ անցնել սահմանը և օգնության հասնել Մասունի և Դաշտի հայ բնակչությանը: Թորգոմի գլխավորած <<Սրբիկ>> մարտախումբը ձևավորվել է ՀՅԴ Կարսի <<Ջրաբերդ>> կենտրոնական կոմիտեի ջանքերով, իսկ թուրքական իշխանությունները ուշի ուշով հետևում էին Կարսում տեղի ունեցող գործողություններին: Սակայն, երբ խումբը կազմ ու պատրաստ սպասում էր Երկիր անցնելուն, Մենակը (Եգոր Առուստամյան) Ջրաբերդ կոմիտեին նամակ է գրում՝ խորհուրդ տալով չանցնել ռուս-թուրքական սահմանը: Հրավիրվում է խորհրդակցություն այս հարցը քննարկելու համար: Ի վերջո, երկար քննարկումներից հետո Կարսի կենտրոնական կոմիտեին այլընտրանք չէր մնում, քան ընդունել սահմանն անցնելու և Մասուն մեկնելու որոշում: Մարտական խմբի զինմանը նախատեսված զենքերը հաջողությամբ տեղափոխվում և կենտրոնացնում են Բայբուրդ գյուղում: Համաձայն Արամայիս Ազնավուրյանի վկայության, մարտախմբի զենքերի տեղափոխությունը ՀՅԴ Բայբուրդի մարմնի անդամների Վարդանի ու Փիլոսի ընկերակցությամբ, իրականացրել է հենց ինքը: Ձենքերի տեղափոխությունից մի քանի օր անց մարտախմբի անդամները նույնպես կենտրոնանում են Բայբուրդում, ուր նրանց ընդգծված ջերմությամբ է ընդունում տեղի բնակչությունն ու հատկապես

երիտասարդությունը: Մարտախումբը մեկ շաբաթ մնում է Բայբուրդում⁶: Թուրքական կառավարությունը Սասունի շրջափակումը սկսում է հենց <<Մրրիկ>> խմբի այնտեղ մուտքից հետո: Այս խումբը 1903 թ. մայիսին Կարս-Բասեն-Խնուս գծով ճանապարհ է ընկնում իր նպատակավայրը՝ իր հետ տանելով 30 հրացան (այլ տվյալներով՝ 25) և 13000 փամփուշ⁷:

Կարսում կազմված այս զինատար խումբը բաղկացած էր 27 հեծյալներից. <<Անոնց մեջ էր Տուրպախը, որը 1894-95 թիւերուն գործիչ էր եղած Դուրան-Բարձրաւանդակի մէջ: Նաև Քաֆթար Արշակը, ապագայ նշանաւոր Քեռին, Բաներդից Արշակը, ապագայ յայտնի Սեպուհը, որը արդէն եղած էր Սասնոյն աշխարհին մէջ, Սվազի Մուրատը, Կիւմիշխանեցի Աւօն, Ղարսեցի Նիկոլը, Ջինուր Գրիգորը, Մարտոն, Առաքելը եւ Որսորդ Գեորգը>>⁸:

Թորգոմի հեծյալ մարտախումբը արդեն 1903 թ. ամռան սկզբներին Սասունում էր, որտեղ նրանց մեծ ոգևորությամբ դիմավորում է տեղի բնակչությունը: Այդ ոգևորությունը պայմանավորված էր նրանով, որ այս խմբում ընդգրկված էին ազատագրական պայքարի այնպիսի նշանավոր գործիչներ, որոնք իրենց գործունեությամբ արդեն մեծ համբավ և անուն էին ձեռք բերել հայության շրջանում: Մինչև Սասուն հասնելը մարտախումբը հաղթահարել էր մի շարք դժվարություններ՝ հատկապես ռուս-թուրքական սահմանն ու Արաքսն անցնելիս: Նրանք անվտանգությունից և գաղտնիությունից ելնելով ստիպված էին ցերեկը պատսպարվել որևէ վայրում, իսկ գիշերը առաջ շարժվել: Սասունից ՀՅԴ <<Ջրաբերդի>> կենտրոնական կոմիտեի իր ընկերներին հասցեագրված նամակում Թորգոմը գրում է. <<Տաճկահայ ժողովրդի ընդունելությունը զանազան տեղերում տարբեր էր: Բասենում ժողովուրդը երբեք չէր ուզում պատսպարել մեզ: Այստեղ երկու օր բռնի ուժով միայն կարողացանք մարագներում պատսպարել եւ խոյս տալ վտանգներից>>⁹: Բասենից հետո ֆիդայիները պատսպարվում են Խնուսում, որտեղ համեմատաբար ավելի սիրալիք էր բնակչությունը: Այնուհետև մարտախումբը ապահով հասնում է Մուշ: Ի տարբերություն Բասենի, ընդձում է Թորգոմը. <<...դաշտի ժողովրդի ոգևորիչ ընդունելությունը մեզ մոռացել տուեց 8 օրայ ընթացքում ճանապարհին կրած մեր բոլոր տանջանքները: Ըստ երեւոյթին, այդտեղի խմբական կազմակերպությունները (նկատի ունի <<Դուրան-Բարձրավանդակ>>-ի խմբերին – Կ. Ե.) շատ լաւ էին, գիշերը գիւղների մօտով անցնելիս մեզ դիմաւորում եւ ուղեկցում էին բազմաթիվ զինված երիտասարդներ>>¹⁰: Սասունում գտնվելու ժամանակ Թորգոմը բազմաթիվ նամակներ է գրում ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեին: Այստեղ նա նկարագրում է Սասունի հայ բնակչության ծանր վիճակը,

⁶ Տե՛ս Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, 2006, էջ 264:

⁷ Տե՛ս Ներսիսյան Ա., Ազգային-ազատագրական պայքարը Տարսնում 1894-1908 թթ., Երևան, 1999, էջ 75:

⁸ Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության (քառահատոր շարք) նուիրում 2.3.Դ. 100 ամեակին, հրատ. Յ. Դաշնակցության Բիւրոյի, հատոր Բ, Աթէնք, 1991, էջ 181:

⁹ Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 274:

¹⁰ Նույն տեղում, էջ 275:

պատմում թուրքերի, քրդերի կատարած հայահալած քաղաքականության մասին: Չնայած Սասունում ապստամբության համար անհրաժեշտ պատրաստություններն ու քայլերը արված էին, բայց Կարսից և Սալմաստի շրջաններից օգնությունը ուշանում էր: Անհայտ պատճառներով կապը կտրվել էր օգնական ուժերի հետ և այս պայմաններում անհրաժեշտ էր կազմավորել նոր մարտական ուժեր և զբաղվել զենք-զինամթերքի մատակարարմամբ: Այս գործը հանձնարարվում է Թորգոմին և Կայծակ Վաղարշակին (Վաղարշակ Բաղդասարյան): Այդ նույն ժամանակ Պարսկաստանում և Կարսում ձևավորվում են ևս մի քանի մարտախմբեր, որոնց թվում էին Խանի <<Կայծակ>> հեծյալ և Օնիկ Ներուզի <<Շանթ>> հետևակ մարտախմբերը:

Խանի մարտախումբը՝ կիլիկիացի Ժիրայրի, գյումուշխանեցի Ավոյի և Կայծակ Առաքելի աջակցությամբ ձևավորվել էր դեռևս 1902 թ.՝ ՀՅԴ Արևելյան Բյուրոյի հանձնարարությամբ, սակայն խմբի Սասուն հասնելու գործընթացը հետաձգվել էր: Մարտախմբի զենքերը կենտրոնացված էին Պայգարա գյուղում, որտեղի բնակչությունը ջերմ վերաբերմունքով է դիմավորում հայդուկներին: Մարտախմբի վալադ է նշանակվում դեպի Սասուն տանող ճանապարհին քաջատեղյակ և արդեն մեծ հեղինակություն վայելող Որսորդ Գևորգը: Պայգարայից հետո մարտախումբը բարձրանում է Ալլահեքբեր լեռը և շարժվում Ագարակ հայկական գյուղը, որտեղ նրանց նույնպես մեծ ոգևորությամբ են դիմավորում: Այնուհետև խումբը հասնում է ռուս-թուրքական սահմանին գտնվող Բարդոս գյուղը: Սակայն արշավախումբը ստիպված է լինում հետ կանգնել սահմանն անցնելու որոշումից, քանի որ տեղեկություններ են հասնում, որ թուրքական սահմանապահները ավելացրել են զինվորների թիվը: Խանը գիտակցելով, որ այդ պահին սահմանն անցնելը վտանգավոր է, ստիպված է լինում մարտախմբի հետ միասին վերադառալ Պայգարա և թաքցնել զենքերը: Խանը վերադառնում է Կարս, իսկ հայդուկների մի մաս էլ մեկնում են Ալեքսանդրապոլ:

Կարսում Խանը Ժիրայրի հետ միասին ձերբակալվում է զենքերի թաքստոցի մատնիչներից մեկի՝ Նալբանդ Գրիգորի ահաբեկման համար, սակայն շուտով ազատվում է բանտից և հեռանում Պարսկաստան ու մի քանի ամիս անցկացվում Թավրիզում:

1903 թ. գարնանը Խանը Պարսկաստանից վերադառնում է Կարս: ՀՅԴ <<Ջրաբերդ>> Կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ նա կազմավորում է <<Կայծակ>> հեծյալ մարտախումբը, որը Օնիկ Ներուզի <<Շանթ>> հետևակ մարտախմբի հետ միասին պիտի մեկնեի Սասուն¹¹: Օնիկ Ներուզը մինչ Սասուն մեկնելը մասնակցել է զենք-զինամթերքի հայթայթման ու Երկիր տեղափոխելու աշխատանքներին: Այնուհետև նա մասնակցություն է ունեցել Քրիստափոր Միքայելյանի ղեկավարած <<Փոթորիկ>> խմբի գործունեությանը: Սակայն Ներուզի հիմնական նպատակը մնում էր ֆիդայիների հետ միասին Սասուն մեկնելը: Պատահական չէ, որ Կարսի <<Ջրաբերդ>> կենտրոնական կոմիտեի

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 286:

հանձնարարությամբ նրան է վստահվում Սասուն մեկնող ամենամեծ մարտախմբի ղեկավարությունը:

Այս մարտական խմբերի նպատակը, ըստ Ռուբենի, հետևյալն էր. <<ա) Պարենաուրել երկու խումբերը առատ պաշարով (անոնց միացեալ թիւը կը հասնէր 150-ի) եւ այդ պաշարը հասցնել Սասուն՝ անոր պետքերուն համար: ք) Խումբերը անձերով, որոնք Երկիր իյնալով՝ կարող են դառնալ տեղական զինուորական ղեկավարներ, իսկ մնացածները ետ վերադարձնել, եթէ ատոնք միայն գէնք բռնողներ էին>>¹²: Մարտախումբը պետք է անցնէր Սասուն տանող 250 կմ ճանապարհ, որը լի էր թուրքական և քրդական աշիրթներով: <<Ներուզի եւ Խանի 150նոց զինատար խումբերուն նպատակը նոյնն էր, ինչ որ Թումանիւնը և Ճարտարիւնը,- գրում է Ռուբենը,- միայն աւելի կատարելագործուած, եւ քանակով 5 անգամ աւելի: Բայց անոնց վիճակուած էր աւելի դառն ճակատագիր, քան Խաթաւիւնի հերոսներուն>>¹³: Սեպտեմբերի 10-ին Տեղաւենքլի գյուղում տեղի է ունենում <<Կայծակ>> և <<Շանթ>> զինախմբերի խորհուրդների միացյալ խորհրդաժողովը, ուր վերջնականապէս ճշգրտվում և գծագրվում են Սասուն մեկնելու ստույգ օրը և ուղիները¹⁴: Արդէն 1903 թ. սեպտեմբերի 17-ին Խանի և Ներուզի զինախմբերը անցնում են ռուս-թուրքական սահմանը և <<անարգել կը հասնին Տալի Պապա, Գումաձոր, Իւզվերան եռանկիւնին, սահմանէն շուրջ 20 քիլոմէթր խորութեամբ: Ու կը սկսի կռիւր առաւօտէն սկսած>>¹⁵: Խանի խումբը հասնում է Բոցիկի լեռները ուր և պետք է միանար Ներուզի զինախմբին: Սակայն Խանի մարտախումբը նկատվում է տեղի քրդերի կողմից, իսկ առավոտյան արդէն կանգնած էր թուրքական կանոնավոր զորքի դէմ: Մի կողմում թուրքն էր իր մեծաքանակ զենք-զինամթերքով, մյուս կողմում՝ քաջարի հայդուկները իրենց վճռականությամբ:

Չնայած այս կովում Խանի հեծելախումբը հաղթանակ է տանում՝ թշնամուն տալով մեծ կորուստներ, այնուամենայնիվ Խանին չի հաջողվում օգնության հասնել Ներուզի մարտախմբին, քանի որ Խանի հեծելախումբը. <<...անցնում են դէպի արեւելք՝ Ըղըր-Բըղր կոչուած քարաժայռերը: Մանավանդ, որ արդէն լուր էին ստացել թէ Ներուզի խումբը կտոռորուէ է, իսկ դէպի Խնուս գնալն էլ կպապուած էր անյաղթահարելի դժարութիւնների հետ>>¹⁶:

Ամբողջ սահմանը լցված էր թուրք-քրդական ուժերով և միակ էլքը մնում էր անհապաղ վերադառնալ Կովկաս: Սակայն ճանապարհին, երբ մարտախումբը անցնում էր Դալի Բաբայի կիրճով, նրանց վրա են հարձակվում թուրք-քրդական միացյալ ուժերը: Կիրճն այնքան նեղ էր, որ ամեն կողմից տեղացող կրակը անելանելի դրության մեջ էր գցել հայդուկներին: Հայդուկները կովում են մինչև վերջ և ընկնում հերոսի մահով: Նույնպիսի դաժան ճակատագիր

¹² Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. 1, գ. հրատ., Թեհրան, 1982, էջ 157:

¹³ Նույն տեղում, էջ 158:

¹⁴ Տե՛ս Գևորգյան Շ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 294:

¹⁵ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 159:

¹⁶ Տե՛ս Գևորգյան Շ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 298:

էր սպասվում նաև Ներուզի հետևակ խմբին: Վերջինս անցնելով ռուս-թուրքական սահմանը նկատվում է քուրդ հովիվների կողմից, որոնք կրակում են մարտախմբի վրա, Ներուզը հրամայում է՝ չպատասխանել հովիվների կրակոցներին եւ առաջ շարժվել: Նոյեմբերի 18-ին, գիշերվա ժամը 3-ին զինախումբը գետանցում է Արաքսը եւ ուղղություն վերցնում դեպի Բոցիկի լեռներ՝ հանդիպելու Խանի հեծելախմբին¹⁷: Ճանապարհին հանգստանալու և տեղ գտնելու համար Ներուզը մարտախումբը բաժանում է երկու մասի՝ մի մասը Սուլուխցի Սերոբի գլխավորությամբ մեկնում է Յուզվերան գյուղ, իսկ մյուս մասը Ներուզի ղեկավարությամբ հետևում են Սուլուխցի Սերոբին: Սակայն ճանապարհին վերջինիս ընդառաջ են դուրս գալիս քուրդ և թուրք զինյալները և կռիվ են բռնվում: Ներուզը ստիպված էր փոխել շարժման ուղղությունը՝ շարժվելով դեպի Խնուս: Այդ նույն ժամանակ Սերոբին հաջողվում է ճեղքել պաշարման օղակը և հասնել գյուղ: Բայց շուտով հակառակորդ ուժերը պաշարում և հրդեհում են գյուղի մարագներից մեկը, որտեղ և գտնվում էր զինախումբը՝ գոհվում են Սերոբի երկու որդիները, իսկ գիշերով թշնամու դեմ կազմակերպած գրոհի ժամանակ գոհվում է նաև Սուլուխցի Սերոբը: Թուրքական զորքերը, տեղեկանալով հայ մարտական ուժերի երթուղիներին, ամեն բան անում էին Խանի և Ներուզի խմբերի միավորումը խափանելու համար: Առավել հարմարավետ դիրքեր գրավելու համար Ներուզը խումբը բաժանում է երկու մասի և 27 մարտիկներ դիրքեր են զբաղեցնում մոտակա բլրի վրա և աննահանջ մարտնչում մինչև ուշ երեկո: Ներուզը քաջ գիտակցում էր, որ այլևս չի կարող հասնել Սասուն, իսկ միակ օգնական ուժը՝ Խանի հեծելախումբն էր, որը կռվի էր բռնվել թշնամու հետ: Այդ իրավիճակում ամենախելամիտ որոշումը, թերևս, Կովկաս վերադառնալն էր: Զինախումբը գիշերով թողնում է դիրքերն ու շարժվում դեպի ռուս-թուրքական սահմանը, որն ընդամենը 20 կմ էր հեռու մարտադաշտից¹⁸: Ներուզի զինախմբի հետագա գործողությունների մասին տեղեկություններ չեն պահպանվել: Այդ իրողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ զինատար խմբի այն անդամները, որոնք մասնակցել էին վերջին մարտերին, բոլորն էլ գոհվել են: Պահպանված մի վավերագրում նշվում է, որ զինախմբի հայրուկները դեպի ռուսական սահմանը շարժվելիս բախվել են թնդանոթներով զինված թուրքական մեծաքանակ զորքի և քրդական աշիրեթների հետ ու միջև վերջ մարտնչելով գոհվել¹⁹: Թեև Դաշնակացության կողմից կազմակերպած ամենամեծ՝ Խանի և Ներուզի մարտական խմբերը իրենց նպատակին չհասան, այնուամենայնիվ, նրանց մղած հերոսական կռիվները մնում են հայ ազատագրական շարժման պայծառ էջեր: <<Թորգոմի, 1904-ին երկրորդ անգամ, Խանի, Նելրուզի, Դումանի, Երկաթի եւ Թոխմախի, Միհրանի, Փոխիկի, Շաշոյի, Զուլումաթի եւ այլ խումբերը այդ ճակատագրին ենթարկուած

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 300:

¹⁸ Նույն տեղում, էջ 303:

¹⁹ Նույն տեղում:

էին 1903-1904-ին>>²⁰, -այսպէս է բնութագրում 1903-1904 թթ. արշավախմբերը, ՀՅԴ նշանավոր գործիչ Վ. Փափազյանը:

Հայ ազատագրական պայքարի կարկառուն դեմքերից է Աշոտ Երկաթը (Արմենակ Լևոնյան), ով անգնահատելի դեր է ունեցել դէպի Երկիր գեներգինամթերքի տեղափոխման գործում: 1904 թ. հունվար-փետրվար ամիսներին Սոֆիայում տեղի է ունենում ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովը, որին Երկրից դուրս եկած ազատագրական մի քանի գործիչների հետ միասին մասնակցում էր նաև Երկաթը: Վերջինս ժողովում հանդես գալով Թորգոմի փոխարեն՝ առաջ է քաշում Դուրան- Բարձրավանդակի խնդիրներին վերաբերող հարցեր: Ժողովում որոշում է կայացվում նոր զինատար և մարտական խմբերի ձևավորման ու Երկիր ուղարկելու մասին: Մինչ այդ Երկաթն իր խմբով գործել էր Ախլաթում և մեծ աշխատանքներ տարել Սասուն զենք-զինամթերքի տեղափոխման հարցում: Երկաթը՝ Հրայրի, Գուրգենի (Բաղդասար Մայան), Վազգենի (Տիգրան Տերոյան), Վարդգեսի (Հովհաննես Մերենկյուլյան), Վահանի (Կարապետ Տուրքեմաճյան) գաղափարների ջերմ պաշտպանն էր և կողմնակից Երկրում զանգվածային ապստամբության կազմակերպման գաղափարին:

Երկաթի մարտախումբը (խմբում մեծ էր հատկապես Թխմախի (Քղեցի Պողոս) դերը) կազմակերպվել է ՀՅԴ Երևանի <<Մրգաստան>> կոմիտեի ջանքերով: <<Երկաթ եւ Քղեցի Պողոս,-նշում է Ռուբենը,- մայիսի կէսերուն կը վերցնեն ռազմամթերք, դրամ եւ 35 ֆետայիներու Իգտիրէն ճամբայ կ'իյնան: Կը կտրեն սահմանի լեռները, կանցնին Ալաշկերտի դաշտը ու կը հասնին Միրզաջանի մօտերը, ուր հանգստանալէ ետք մայիսի վերջին օրերուն ճամբայ կ'ելլեն դէպի Ախլաթ, Սասուն հասնելու նպատակով>>²¹: Ախլաթում խումբը մի փոքր հանգստանալու համար կանգ է առնում և հանգրվանում Սոսկուն գյուղի մոտ գտնվող Խոջալու դաշտի քարայրներից մեկում: Ջրի և սննդի համար Երկաթը Սոսկուն է ուղարկում Թխմախին և երկու Աբրոններին, սակայն վերջիններս նկատվում են տեղի քրդերի կողմից. <<... բարբարոսները անմիջապէս դանակներով մորթում են Պողոսին, որը յեղափոխական հին հայդուկներից էր. Ապրոյին էլ վիրաւորում և բանտարկում են, իսկ միւս Ապրոս աջողում է փախչել ու խմբին պաշար հասցնել>>²²:

Սակայն քրդերը չեն հանգստանում երկու հայդուկների սպանությունով, և երբ խումբը պատրաստվում էր դուրս գալ քարայրից, խմբի պահապան զինվորը տեղեկացնում է , որ քրդերը պաշարել են քարայրը: Սկսվում է կռիվը հայդուկային փոքրաթիվ խմբի և քրդական մեծածավալ զնդի միջև: Կռիվը շարունակվում է միջև երեկոյան, երբ Երկաթի հրամանով. <<Երկու հոգի փորձում են դուրս գալ այրից և մի քիչ շփոթութիւն ձգել թշնամու մէջ, որը և հաջողվում է>>²³: Սկսվում է թե՛ծ կռիվ: Կռվում հերոսի մահով ընկնում է նաև

²⁰ Փափազյան Վ., Իմ յուշերը, հատոր առաջին, Պոսթըն, 1950, էջ 206:

²¹ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 328:

²² <<Դրօշակ>>, 1904, թիւ 8, էջ 474:

²³ Նույն տեղում:

հայ ազատագրական պայքարի մեծանուն գործիչներից մեկը՝ Աշոտ Երկաթը, որի նահատակությունը մեծ կորուստ էր ազատագրական պայքարի համար: Իսկ մարտախմբի ողջ մնացած յոթ անդամները բարձրանում են մոտակա լեռը և շարունակում կռիվը թուրք և քուրդ զինյալ ուժերի դեմ: <<Կռում են մինչև երեկոյ՝ մեծ զոհեր խլելով թշնամուց: Մակայն, ի վերջոյ բոլորը գոհուում են, բացի Գասպարից, որը գերի է ընկնում, բայց չի սպանուում՝ ցուցաբերած անօրինակ քաջութեան համար>>²⁴: Հայտնի չէ, թե հետագայում ինչ եղավ նրա հետ:

Ոչնչացվեց Սասունին օգնության շտապող ևս մի մարտախումբ, որի անդամները հերոսական պայքար մղեցին բարբարոս թշնամու դեմ և, կնքեցին իրենց մահկաացուն՝ իրենց հետ տանելով Երկրի ազատագրության վաղեմի երազանքները: Երկաթի զինախմբից բացի Սասուն են ուղարկվել ևս մի քանի մարտական խմբեր, որոնց թվում էր Նիկոլ Դումանի հեծյալ խումբը: Վերջինս, ինչպես և Երկաթն ու Հրայր Դժոխքը, ընդհանուր ապստամբության կազմակերպման գաղափարի կողմնակից էր և գտնում էր, որ սխալ է Երկիր զինատար խմբեր ուղարկելը, քանի որ դրանք ձախողվում էին, իսկ հաջողության հասնելու համար հարկավոր էր միավորվել և միասնական ու կազմակերպված ուժերով հասնել հաղթանակի: Նիկոլ Դումանը քաջատեղյակ էր Սասունում տիրող ծանր իրավիճակի մասին, քանի որ երկար տարիներ մասնակցել էր դեպի Երկիր գենք-զինամթերքի մատակարարմանը: Տարիների ընթացքում ձեռք բերած նրա փորձը ցույց էր տալիս, որ փոքրածավալ ուժերով դժվար կլինի հաղթել մեծաքանակ թուրք և քուրդ ուժերին: Այս նկատառումներից ելնելով՝ Դումանը դժկամորեն է ընդունում Սասունի ինքնապաշտպանությունը ղեկավարելու առաջարկը²⁵:

Դումանի Սասուն մեկնելու որոշումը արդեն կայացվել էր, իսկ մայիսի կեսերին նա արդեն Սալմաստում էր, սակայն մարտախմբի Երկիր մեկնելու գործընթացն ինչ-ինչ պատճառներով ձգձգվում էր: Հետագայում պարզվում է, որ ՀՅԴ Արևելյան բյուրոն փոխել է իր որոշումը և հետ է կանչում Դումանին, սակայն կարճ ժամանակ անց բյուրոն, այնուամենայնիվ, Դումանին Սասուն ուղարկելու որոշում է կայացնում:

Դումանը ամեն կերպ փորձում էր իր խմբում ընդգրկել այնպիսի մարդկանց, որոնք քաջատեղյակ լինեին ռազմական բոլոր հմտություններին, լինեին երիտասարդ, որպեսզի կարողանային հաղթահարել դեպի Սասուն տանող դժվարին ճանապարհը: Շատերը, այդ թվում նաև մեծ փորձ ունեցող Փոխիկը, ցանկացել էին մտնել այդ խմբի մեջ, բացի խմբապետ Նիկոլ Դումանից, ընդգրկում են այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք են՝ Բժիշկ Յակոբ Զավոյանը, Խաչատուր Ամիրյանը (Դաշնակցական Խեչո), Թադևոս Ամիրյանը (Գիժ Թաթոս-խմբապետի օգնական), Սարգիս Բարսեղյանը, ուսանող (բուն անունով Գրիգոր Օդաբաշյանը), Ռուբենը, ռուսական հրետանու սպա (Մինաս

²⁴ Ներսիսյան Ա., Չ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1898-1908 թուականներ) հատ. Բ, Բեյրութ, 2008, էջ 169-170:

²⁵ Տե՛ս Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2001, էջ 118-119:

Տեր-Մինասյանը), Գրիշը (ռուսական հեծելազորքի ենքասպա, ջավախեցի), ռուսական հետևազորքի ենթասպա Սուրենը, շամախեցի Սերոբը, Մարբազ Խեչոն (Խաչատուր Կարապետյան, դարալազյազցի), Խոյ-Մեդյավարցի Խեչոն, Առաքելը, Ասաստուր, Տիգրանը, Ավոն (վանեցի) , Մատոն (քուրդ), Գրեն (ասորի)-երեքն էլ վալաղներ²⁶: Յուրաքանչյուրին տրված էր որոշակի առաջադրանք:

Հեծյալ խումբը հունիսի 7-ին զենք-զինամթերքով՝ 27 մոսին և 9000 փամփուշտներով հանդերձ ուղևորվում է Մասուն: Սակայն հունիսի 10-ին, երբ խումբը Ղոթոր գյուղի մոտերքով շարժվում էր Ռազի կոչված վայրը, նկատվում է քուրդ հովիվների կողմից, իսկ կարճ ժամանակ անց նրանց շրջապատում են քուրդ զինյալները: Քրդերի հետ լեզու գտնելու փորձերը ձախողվում են ու կռիվ է սկսվում թուրք-քրդական զորքերի և փոքրաթիվ հայկական ջոկատի միջև: Մինչև ուշ երեկո կռիվը շարունակվում է: Նիկոլ Դումանը քաջատեղյակ էր քրդերի մարտավարությանը (մութն ընկնելուն պես հեռանում էին, առավոտյան վերադառնում՝ կռիվը շարունակելու համար): Ռազիի կռվում քրդերը վարվում են նույն կերպ, առավոտյան լույսը բացվելուն պես քրդերի հետ միասին հարձակումներ են սկսում նաև թուրքական կանոնավոր ուժերը և շրջապատում մարտախմբի անդամներին: Սակայն Դումանի զինվորական տաղանդի շնորհիվ խումբը կարողանում է ճեղքել պաշարման օղակը և վերադառնալ Մալմաստ: Ռուբենը գրում է. «Մեր բախտն էր եղել, որ Ռազիի մոտերքը մեզ չէին սպասեր: Անոնց տուած զոհերուն թիւը եղած էր՝ 8 զօրք ու սահմանապահ եւ 23 քիւրտ: Մեր աչքով տեսածը 17 դէակէն աւել չէինք կրնար հաշուել: Ինչ էլ որ լինէր, մեր կեանքը պարտական էինք Նիկոլի ճարպիկութեանը»²⁷: Դժբախտաբար նաև տապալվում է Երկիր ուղևորվելու Դումանի ձեռնարկած այս ջանքը: Դումանը և խմբի անդամների մի մասը մեծ ջանքերի գնով հասնում են Մալմաստ, իսկ խմբի չորս անդամներ՝ Խոյ, որտեղ ձերբավորվում են, բայց շուտով ազատ են արձակվում և ուղևորվում Մալմաստ, այստեղից էլ Բաքու:

Մինչ Աշոտ Երկաթի խումբը կռիվներ էր մղում Ախլաթայի մոտ, Կարսի Ջրաբերդ Կենտրոնական կոմիտեն ձեռնամուխ է լինում մեկ այլ՝ «Դժոխք» մարտական խմբի ձևավորմանը Կայծակ Վաղարշակի ղեկավարությամբ: Վերջինս մինչ այս ղեկավարության ստանձնումը՝ մասնակցել էր Մշո Առաքելոց վանքի կռիվներին: Հեծելախումբը հավաքվում է Կարսի շրջանի Դուլբանտլու և Բերնա գյուղում, որտեղից էլ մայիս 31-ին ուղևորվում է Մասուն: «...Ամբողջ խմբի փափագն էր, եթէ հնարաւորութիւն կը ներկայանայ անցնել ու մեկնել Երկրի խորքը, իսկ եթէ ոչ կռուիլ հենց Բասենում...»²⁸: Հեծելախմբի անդամների մի մասը առաջին անգամ էին զենք բռնում, իսկ նրանց այդ գործում օգնում էր Վաղարշակը: Նրանք քաջատեղյակ էին Երկիր մեկնած խմբերի ձակատագրին: Հեծելախումբը դուրս է գալիս Դուլբանտլու գյուղից և հասնում

²⁶ Տե՛ս Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, էջ 125-126:

²⁷ Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 310:

²⁸ Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 347:

Մուրք Խաչ լեռը ու հանգրվանում լեռան մոտ գտնվող ձորում, իսկ հունիսի 6-ի երեկոյան, կտրում է ռուսական սահմանը Բասենի ուղղությամբ²⁹: Խումբը հանգիստ անցնում է ռուս սահմանապահների կողքով, սակայն թուրքական պահակակետի կողքով անցնելիս հեծելախումբը նկատվում է թուրք զինվորների կողմից և ստիպված է լինում կռվի բռնվել: Բայց <<...կը յաջողի սահմանն ենթա մտնել ու Խորումի ու Ջեյհնի հին բերդին մեջ, բլուրի մը վրայ, հանգիստ առնել: Վաղ արշալույսին խումբը կը պաշարուի սահմանապահ զորքերու եւ քիւրտ աշիրլեթներու կողմէ: Ռուս զինվորները ռուսական սահմանէն կը դիտեն հայ ֆետայիներու հետ սկսուած այդ կռիւը, որ մինչեւ կէսօր յաջող կանցնի, եւ թշնամին կորուստներ տալով չի յաջողիլ մօտենալ ֆետայիներու դիրքերուն>>³⁰: Բայց ֆիդայիներն անգոր էին երկար ժամանակ դիմադրություն ցույց տալ հակառակորդի բազմաքանակ զինվորներին: Շուտով Վաղարշակը ռուսական սահման վերադառնալու հրաման է տալիս, սակայն նահանջելու ընթացքում երկու ոտքից մահացու վիրավորվում է և ընկնում գոչելով, <<Տղայք, կուեցեք և լուծեցեք մեր ընկերներու վրէժը>>³¹: Նրա հետ միասին գոհվում են նաև այլ հայորդիներ: Խմբի ողջ մնացած 16 անդամները դժվարությամբ կարողանում են դուրս գալ շրջափակումից: Ողջ մնացածները ռուս Գևորգի ուղեկցությամբ հասնում են ռուսական սահմանը, սակայն,- ինչպես նշում է Ռուբենը,- <<... խեղճը դաժանօրէն սխալուած էր. ռուս զինուորներու համազարկները կը դիմաւորեն զինքն ու իր խումբը, եւ երկու կրակի մէջտեղ իյնալով Գեորգն ու իր ընկերները բոլորն ալ գնդակահար կ'լլան: 29 հոգիէն միայն երկու վիրաւորներ կ'ազատին>>³²:

<<Դժոխք>> հեծելախմբի կռվի մասին ռուս սահմանապահները տեղեկացնում են Կովկասի կառավարչապետ Գոլիցինին՝ ասելով, թե դրանք Անդրանիկի խմբից են: <<Այդ <<մանկատան>> զառանցանքի վրայ հիմնուած՝ իշխան Գօլիցինն կարգադրել է կրկնապատկել խստութիւնները, որպէսզի խռովութիւնը չ'անցնի դէպի Կովկաս>>,- գրում է <<Դրոշակը>>³³:

Երկաթի և Կայծակ Վաղարշակի զինախմբերի ձախողումից հետո, չնայած թուրք և ռուս սահմանապահները ուժեղացրել էին հսկողությունը և դժվար կլինէր իրականացնել Սասուն հասնելու Դաշնակցության ջանքերը, այնուամենայնիվ ՀՅԴ Արևելյան բյուրոն և Կարսի <<Ջրաբերդ>> Կենտրոնական կոմիտեն ձեռնամուխ են լինում նոր մարտական խմբի ձևավորմանը: Հաշվի առնելով Թորգոմի (Թուման Թումանյան) փորձառությունը և <<Մրրիկ>> զինախմբի հաջողությունը՝ <<Որսկան>> մարտախմբի ղեկավարությունը հանձնվում է նրան: Թորգոմի հետ միասին խմբի ղեկավար է նշանակվում նաև հայ ազատագրական պայքարի նշանավոր մեկ այլ գործիչ Որսորդ Գևորգը:

²⁹ Տե՛ս նույն տեղում:

³⁰ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 349:

³¹ <<Դրոշակ>>, 1904, թիւ 7, էջ 454:

³² Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 350:

³³ <<Դրոշակ>>, 1904, թիւ 7, էջ 455:

Զինախմբի նպատակն էր՝ անցնել սահմանը և հասնել Մասուն: <<Թուման (Թորգոմ), երբ կը վերադառնայ Ընդանուր ժողովեն, Որսորդ Գեորգի հետ կը կազմէ 61 հոգանոց Որսկան խումր: Այս անգամ, սակայն, Թուման պիտի չկրնար կրկնել իր <<Մրիկ>> ձրատր խումբին յաջող փորձը>>³⁴, - վկայում է Ռուբենը: Մարտախմբի հավաքատեղին դառնում է Օլթիի գյուղերից մեկը, որտեղ հունիսի 30-ին հավաքվում են խմբի անդամները և տեղավորվում նախապես ընտրված երեք մարագներում: Որոշվում է խումբը բաժանել երկու մասի, մեկը՝ Թորգոմի, մյուսը՝ Որսորդ Գեորգի ղեկավարությամբ: Մարտախմբի երթուղին թաքցնելու համար արգելված էր նրանց դուրս գալ մարագներից և հանդիպել գյուղացիներին և հակառակը: Չնայած արգելքին, գյուղացիները դուրս են գալիս գյուղից և ջերմ խոսքերով ճանապարհում մարտախմբին: Իսկ արդեն 1904 թ. հունիսի 30-ի գիշերը խմբերն անցան ռուսական սահմանը և աղջամուղջին մտան Էզրումի վալայեթի Զարդանիս գյուղի ավերակները³⁵: Երբ զինախումբը հասնում է Զարդանիսի աղբյուրներից մեկին՝ խմբապետ Թորգոմը հրամայում է կանգ առնել և մի փոքր շունչ քաշել: Խմբի մասնակիցներից մեկը հետազայում հետևյալն է նշում.<< ... աղբյուրից էլ բարձրացանք ռուսական թիւ 68 սահմանային սիննէն մէկուկէս վերստ հեռու, անոնք սահմանը կանցնին աննկատ, աղբյուրի մը վերէն լեռ կը բարձրանան եւ դիրքեր կը բռնեն>>³⁶: Մարտախմբի մի քանի անդամներ բռնների ծանրության պատճառով հետ են մնում և աղբյուրին հասնելով՝ նստում են հանգստանալու և ծարավը հագեցնելու: Միևնույն ժամանակ <<Չորս ռուս զինուոր կու գան այդ աղբյուրը ջուր խմելու, եւ հոն կը տեսնեն երկու շալկավորներ՝ քնած: Կը գողնան մէկուն շալկը եւ կը տանին պահակատուն: Երբ շալկավորները կ'արթնանան ու կը տեսնեն որ թալանուած են, անմիջապէս կը բարձրանան լեռը տեղեկութիւն տալու Թումանին>>³⁷: Սակայն թաքնված ռուս զինվորներից մեկը հետևելով խմբի շարժին արդեն տեղեկացրել էր այդ մասին ռուսական պահականոցին: Թորգոմը ռուս զինվորների հետ բախվելուց խուսափելու համար՝ որոշում է խորանալ Օսմանյան կայսրության խորքերը, բայց ինչպես վկայում է Ռուբենը. <<150-ի չափ սահմանապահ զորքեր կը շրջապատեն անոնց դիրքերը, միաժամանակ լուր տալով տաճիկ ուժերուն: Օլթիի կողմն ալ ռուս սահմանապահ հրամանատար Բիկովը կը հասնի օգնական ուժերով>>³⁸: Սկսվում է թեժ կռիվ: Ռուս սահմանապահների և թուրքական զորքերի անսպասելի հարձակումը, իհարկե, ծանրացնում էր հայդուկների դրությունը: Չնայած հայ մարտիկներն ամեն կերպ փորձում են ռուս զինվորներին հասկացնել, որ պայքարը իրենց դեմ չէ, այնուամենայնիվ, նրանք ոչ մի կերպ չեն զիջում: Ավելին, էլ ավելի է ուժեղանում ռուսական զորքերի գրոհը: Շուտով ծանր դրության մեջ են ընկնում Թորգոմի

³⁴ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 350-351:

³⁵ Տե՛ս Միմոնյան Ն., Ազատագրական պայքարի ուղիներում, Գիքք Ա, Երևան, 2003, էջ 606:

³⁶ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 350:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում:

տասնյակները՝ ընկնելով շրջափակման մեջ: Կովում հերոսի մահով ընկնում է խմբապետ Թորգոմը: <<Խմբապետը դրոշակը առնելով, 10-12 ընկերներով, գնդակների տարափի տակ գնաց դեպի ռուսաց զորքերը անձնատուր լինելու նպատակով, ռուսները՝ բաւական մօտ թողնելով, միանգամից կրակեցին եւ 10 հոգի գետին գլորեցին, որոնց մէջ եւ թանկագին Թորգոմին, Դաշնակցութեան դրօշը ձեռքին>>,- գրում է այդ մասին <<Դրոշակը>>³⁹:

Գևորգը նկատելով, որ ստեղծվել է անելանելի դրություն իր ընկերներին հրամայում է. <<... դուրս գալ դիրքերից և փախչելով ազատել կամ գոնե ընկնել ռուսների ձեռքը, կարծելով թե նրանք կը խնայեն իրենց: Այդ միջոցին ընկերներից շատերը զոհուում են, իսկ ինքը Որսորդը երկու վերք ստացած՝ դեռ շարունակում է կռիւը, հետզհետե ձորը իջնելով>>⁴⁰: Սակայն խմբապետ Որսորդը սխալվում է ռուսներին վստահելու հարցում, քանի որ վերջիններս անխնա կերպով սպանում են բոլորին: <<Ֆիտայիներէն կը սպաննուին 27 հոգի, 6 հոգի կը վիրաւորուին եւ 14 հոգի գերի կ'իյնան, մնացածները կ'փախչին անտառներու միջով>>,- գրում է Ռուբէն⁴¹: Այս մարտական խմբի ձախողումը ևս մեկ անգամ ապացուցում է արշավախմբերի անարդյունավետ լինելու փաստը և հաստատում ընդհանուր ապստամբության կազմակերպման վերաբերյալ Հրայրի ու նրա գաղափարների ճշմարտացիությունը: Զադանիսի կռիվը նշանակալից էր նրանով, որ <<ռուս եւ թուրք զորքերը միասին կռուեցան հայ ֆետայիներու դէմ ցույց տալով թէ երկու կառավարութիւններն ալ թշնաբար կը վերաբերուէին հայ ազատագրական շարժման...>>⁴²:

Նախորդ մարտախմբերի անհաջողությունից հետո 237 Վասպուրականի <<Շամ>> Կենտրոնական կոմիտեի պահանջով Սալմաստում կազմավորվում է հերթական մարտախումբը, որի նպատակը ինչպես նախորդ խմբերինը՝ զենք-զինամթերքի առաքումն էր Երկիր, ինչպես նաև Սասունի բնակչության զինումն ու պաշտպանումը: Այդ խմբի կազմակերպման հանգամանքներն այսպես է ներկայացնում Ռուբէնը. <<...Փոխիկը եւ տղերքը, մէկ խօսք կը լինին եւ կ'որոշէն անմիջապէս Երկիր անցնիլ: Խոսքեր ալ կը լինին, որ Նիկոլ հակառակ է զինուած կերպով Երկիր անցնելուն, բայց եղած են առարկողներ, թէ Նիկոլ Երկիրէն չէ, անոր սիրտ ցաւի, Երկիր փշոտոց գարնելով յետ փախած կորած է եւ դրա համար ալ Երկիր գնալուն հակառակ է>>⁴³: Այնուամենայնիվ, հակառակ Դումանի ջանքերի՝ մարտախումբը ձևավորվում է՝ ստանալով <<Ճապոն>> անունը, իսկ խմբապետ է նշանակվում նշանավոր ֆիդայիներից Փոխիկը (Օհան Օհանյան): Փոխիկի <<Ճապոն>> անվանումը կրող հեծյալ զինախմբի կազմում ընդգրկվում էին 15 հայրուկներ, որոնք Սալմաստում էին գտնվում դեռևս Խանասորի արշավանքի նախօրէին և արդեն հասցրել էին մասնակցել մի շարք

³⁹ <<Դրոշակ>>, 1904, թիւ 8, էջ 471:

⁴⁰ Նույն տեղում, էջ 473:

⁴¹ Ռուբէն, նշվ. աշխ., հ. 1, էջ 351:

⁴² Նույն տեղում:

⁴³ Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 338:

մարտական գործողությունների: Փոխիկի հեծելախումբը հոկտեմբերի 13-ին դուրս է գալիս Սալմաստից և ուղևորվում Սասուն՝ իր հետ տանելով 15 մտսին հրացան 13969 փամփուռներով: Հոկտեմբերի 14-ին խումբը անցնում է <<Սալմաստեն եւ սահմանին մօտ կռուի բռնուեցաւ . . .>>⁴⁴: Խումբը շրջապատվում է քրդական և թուրքական զորքերի կողմից, որոնք նախօրոք տեղյակ էին զինախմբի մասին: Այդ կապակցությամբ Ռուբենը գրում է. <<... լեռները բռնուած էին արդէն հովիւներով եւ քոչւորներով , եւ անոր խմբի շարժումները բոլոր վայրերում կը նկատուէին: Թէւ Մստոն նոյն ճամբով կը տանէր ինչ որ մեր խումբը առաջնորդած էր, բայց այդ ճամբան արդէն թակարդ էր, որ կ'երթար Ռազիի ձորը, ուր նախապէս կը սպասէին թէ սահմանապահները, թէ Համիտիէ գնդերը եւ խուժանը: Արշալուսին Փոխիկի փոքր խումբը արդէն ծանր կռուի մէջ էր եւ մինչև կէսօր անոր հաշիւը փակուած էր>>⁴⁵: Ցավոք խմբի բոլոր անդամները գոհվում են. <<Ոչ ոք խմբէն չազատուեցաւ,- գրում է Ռուբենը,- որ մօտաւոր գաղափար տար անցած դարձածէն>>⁴⁶:

Տեսնելով մարտական և զինատար խմբերի հաջորդական ձախողումները՝ ՀՅԴ Երևանի <<Մրգաստան>> Կենտրոնական կոմիտեն հրաժարվում է իր նախկին ձեռնարկումներից՝ ձեռնամուխ լինելով նոր գործելակերպի: Որոշվում է վրեժխնդրության նպատակով հարձակվել և ոչնչացնել սահմանամերձ <<Մոսուն>> և <<Ձոր>> թուրքական զորանոցները: Այս գաղափարը՝ կարծես Խանատրի արշավանքի շարունակությունն էր: Արշավանքի հիմնական նպատակն էր վրեժխնդիր լինել սահմանանցման ժամանակ սպանված բազմաթիվ հայ քաջորդիների թափած արյան համար:

Սկզբում մարտախմբերի նպատակը <<... պիտի լինէր, շփոթեցնելով տաճիկ կառավարութիւնը, ջլատել նրա ուժերը եւ թուլացնել Բարձրավանդակի դէմ ուղղուած հարուածը ...>>⁴⁷: Սակայն <<Յունիսի վերջերին քրդերի և թուրք զինւորների յարձակումը Իւլ-Քիլիսէի, Ղումլիպուճակի և Ղարաբագարի վրայ ստիպեց <<Դաշնակցութեան>> ... կօմիտէին հիմնովին փոխել ծրագիրը և երկու արշավախումբ հանել դեպի Ալաշկերտ>>,- արշավախմբերի ստեղծումն այսպես է հիմնավորում <<Դրոշակը>>⁴⁸:

Ի վերջո, <<Մրգաստանի>> Կենտրոնական կոմիտեի ջանքերով ծրագիրը իրագործելու համար <<... երկու խումբեր կը կազմէին, <<Արտաւազդ>> ու <<Մասիս>> անուններով, բաղկացած 102 ֆիդայիներէ: Մէկուն ղեկավար կը դառնայ Գայլ Վահանը (Մինաս Տոլպաշեան): Միւսին՝ Բաբերդցի Միհրանը, այն հետագային նիւթեց միհրանական ծանոթ շարժումը>>⁴⁹: Հաշվի առնելով բաբերդցի Միհրանի մեծ փորձը՝(մասնակցել է Խաստուրի կռվին և

⁴⁴ Փափագյան Վ., նշվ. աշխ., հ. 1, էջ 347:

⁴⁵ Ռուբեն, նշվ. աշխ., հ. 1, էջ 331:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նիւթեր ՀՅԴաշնակցութեան պատմութեան համար, խմբ. Հ.Տասնապետեանի, Պէրյուր, հատ. Բ, ք տպ., 1985, էջ 368:

⁴⁸ <<Դրոշակ>>, 1904, թիւ 8, էջ 473:

⁴⁹ Վարանդեան Մ., ՀՅԴաշնակցութեան պատմութիւն, Գրևան, 1992, էջ 244:

<<Փոթորիկի>> գործողություններին- Կ. Ե.) նրան է վստահվում մարտախմբերից մեկի ղեկավարությունը: Առաջին մարտախումբը բաղկացած էր 40, իսկ երկրորդը 60 մարդուց: Թուրքական զորանոցներից մեկը գտնվում էր Ուչքիլիսե և Ղումլուպուճախ հայկական գյուղերի մոտ: <<Այդ երկու զինվորումն էլ կան զորանոցներ՝ առաջինը 50, իսկ երկրորդը 30 զինուորներով: Այս երկու զորանոցները լինելու էին յարձակման առաջին կետերը: Կար մի այլ զորանոց ևս, 50 զինուորներով, ուր լինելու էր յարձակման երկրորդ կետը: Այդ էլ Մօսուն հայկական զիւղի զորանոցն էր, ընկած մի Զօրագետակ տափարակ դաշտի վրայ>>,- գրում է Օնիկը⁵⁰: Հարձակման ժամանակ հայ մարտիկները պետք է պաշտպանեին նաև այդ գյուղերի բնակիչներին: Արշավանքը նախատեսված էր սկսել հուլիսի 25-ին, սակայն ծրագիրն որոշակի փոփոխությունների է ենթարկվում, քանի որ Գայլ Վահանը սահմանամերձ շրջանները ուսումնասիրելիս՝ այդ կողմերում հանդիպել էր հնչակյան մի զինախմբի Փոխանի գլխավորությամբ: Վախենալով, որ նրանք կարող են իմանալ իրենց մտադրությունների մասին և իրենց ամբողջ ձեռնարկը կձախողվի, Գայլ Վահանը <<... առաջարկում է այդ խմբին ամեն տեսակ յարմարություններ՝ զենքերը պահելու, զինուորներին իրենց ձիերով պատսպարելու...>>⁵¹: Այդ հարցով հնչակյաններին է դիմում նաև <<Մրգաստան>> Կենտրոնական կոմիտեն, բայց մերժում է ստանում: Ի վերջո, Օնիկի վկայությամբ. <<...14 հոգի հին-հնչակեաններ յունիս 24-ին դուրս եկան այդ շրջանից դեպի Իւչքիլիսե: Ենթադրվում է որ մեր ծրագիրը նրանց յասնի էր: Յունիսի 31-ին այդ խումբը Ղումլուպուճաղ զիւղի մեջ նշմարուում է ընդհարման բռնելով՝ քաշուում է դիրքերը և երկար կռուում: Նրանք կռել էին քաշաբար անհամեմատ մեծ ուժերի դեմ յաշողեցրել էին 20-ի չափ քիւրդեր գլորել, իրենք էլ 8 հոգի գոհ տալով նահանջել էին>>⁵²: Այս դեպքից հետո թուրքական կողմը <<... այդ շրջանի հայկական մի գծի վրայ կողք կողքի ընկած հինգ զիւղեր – Ղումլուպուճաղ 40 տուն, Իւչքիլիսե՝ 30, Մայդի 5 Ղարաբագար՝ 15 և Ջուգան՝ 40, ենթարկւեցին թալանի, կողոպուտի և աւերման>>⁵³: Հնչակյանների խմբի ձախողումից հետո Երևանի <<Մրգաստան>>կենտրոնական կոմիտեն ձեռնամուխ է լինում իր ձեռնարկած ծրագրի իրագործմանը: Մարտախումբը բաղկացած էր ուղիղ 102 հոգուց, որոնցից 85 զինած էին հրացանով, մնացին 17-ը՝ ատրճանակներով և դաշոյններով: <<Այդ 17-ից 2ը տանում էին դրօշակները, երկուսը իբրև օգնական բժիշկ կրում էին դեղատուփերը, իսկ 13-ը խմբին էին որպես բեռնակիրներ, վերցնելով փամփուշտի ավելորդ պաշար>>⁵⁴, -վկայում է Օնիկը:

⁵⁰ Օնիկի, Մօսունի եւ Զօռի արշաւանքները, Բոստոն, 1905, էջ 6:

⁵¹ Նույն տեղում, էջ 8:

⁵² Նույն տեղում:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում, էջ 10-12:

«Մասիս» խումբը, հինգ տասնյակ զինվորներով և մեկ տասնյակ բեռնակիրներով, որի ղեկավարությունը հանձնված էր Միհրանին և նրա երկու օգնականներին–կիլիկեցի Միմոնին և Լի Հունգ Չանգին:

«Արտավազդ» խմբում ընդգրկված էին երեք ու կես տասնյակ զինվորներ և 7 բեռնակիրներ, որը ղեկավարելու կոչված էր խմբապետ Գայլ Վահանը և նրա օգնական Բարկէնը: Հուլիսի սկզբներին արշավախումբն արդեն պատրաստ էր արշավանքը սկսելուն, իսկ հունիսի 6-ի երեկոյան այդ երկու խմբերը հասնում են Արաքս գետին, որտեղ գտնվում էր արշավախմբի առաջին կայանը: Որոշ ժամանակ այստեղ մնալուց հետո խումբը ստանում է առաջ շարժվելու հրաման և հուլիսի 9-ին հասնում են Գյուն-Կեոբեզմի խոր ձորը, ուր և գտնվում էր երկրորդ կայան – քարանձավը⁵⁵: Այստեղ տեղի է ունենում արշավախմբի հերթական խորհրդակցությունը, որի ժամանակ խմբապետեր Միհրանի և Գայլ Վահանի միջև վիճաբանություն է տեղի ունենում: Բայց, շուտով վերջիններիս միջև ծագած վեճը հարթվում է և <<հուլիսի 11-ին լուսաբացին ֆիդայիները անցան Չնգը կոչված լեռնակատարով Հին Բայազետի գաւառը>>⁵⁶: Լուսաբացին մարտախումբը երրորդ կայանում էր և Չնգներ բարձունքների Ռեսի-Գոմեր բլրի վրա արդեն երևում էին երկու դաշնակցական դրոշներ: Հեռվում երևում էր Մոսուն հայկական գյուղը, որի մի կողմում գտնվում էր համանուն թուրքական զորանոցը, իսկ արևելքում մի ձորակի մեջ գտնվում էր Ջորի պահակակետը: Ռեսի-Գոմերի բլրի վրա տեղի է ունենում խմբի անդամների նիստ և Զինվորական խորհուրդը քննարկում է վերջնական անելիքները: Որոշվում է, որ <<Արտավազդ>> մարտախումբը Գայլ Վահանի ղեկավարությամբ պիտի հարձակվեր Մոսունի (160 զինվոր՝ 50-ը նորակոչիկներ), իսկ Միհրանի գլխավորած <<Մասիս>> խումբը՝ Ջորի (30-40-ի չափ զորքեր) թուրքական զորանոցների վրա: <<Երկու ժամայ ճանապարհ կտրելով, 1904 յուլիս 12-ին (25), առաւօտեան ժամը 4-ին <<Արտավազդ>>խումբը երեք կողմից պաշարեց զորանոցը և յիշած երկու վրանները>>⁵⁷: Գայլ Վահանի գլխավորությամբ խմբի երկու անդամներ կտրեցին Բայազետի հեռագրատան թելերը, իսկ երկուսն էլ բարձրացան զորանոցի կտուրը: Հրացանի ձայնը լսելով՝ պահակակետում սկսվեց իրարանցում, թուրք զինվորները անմիջապես դուրս եկան: Այդ նույն ժամանակ պայթեց երկու ռումբ և նրանց մի մասը տապալվեցին գետնին, իսկ մյուսները անմիջապես քաշվեցին զորանոցից ներսը՝ զենքերը վերցնելու: Սակայն իրար հետևից պայթեցին երրորդ և չորրորդ ռումբերը՝ մեծ վնասներ հասցնելով զորանոցին: Ռումբերի պայթյունը ուղեկցվում էր հայ ֆիդայիների կրակոցներով՝ այս ու այն կողմ տապալելով թուրք զինվորներին: Ջորանոցը վերածվել էր ճակատամարտի դաշտի՝ ողողված թուրքի արյունով: Այն բանից հետո, երբ լուրեր տարածվեցին, որ Մոսուն գյուղի հայկական տներում թաքնվել

⁵⁵ Գևորգյան Ն., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 382:

⁵⁶ Տե՛ս <<Դրօշակ>>, 1904, թիւ 8, էջ 473:

⁵⁷ Օնիկի, նշվ. աշխ., էջ 19:

են քուրդ և թուրք զինվորներ՝ ֆիդայիները սկսեցին խուզարկել գյուղի տները և հաշվեհարդար տեսնել:

Մոսուևի վրա հարձակման ժամանակ իրեն հանձնարարված ծրագիրն է իրականացնում նաև Միհրանի գլխավորած «Մասիս» մարտախումբը: Վերջինս մի քանի անդամներ հսկում էին Չընկլի բարձունքները, որպեսզի թույլ չտան թշնամուն բարձրանալ իրենց դիրքերը: Մոսուևի հարձակումից անմիջապես հետո Միհրանի խումբը ստիպված է լինում անցնել հարձակման, քանի որ Մոսուևի կրակոցները լսվում են Ձորում: Կռիվը անխուսափելի էր: Հայդուկներին միայն մնում էր գրոհել, իսկ կարճ ժամանակ անց թուրք և քուրդ զինվորները սարսափահար այս ու այն կողմ էին փախչում տալով մեծ կորուստներ: Լուսաբացին ամբողջ ձորը լցված էր թշնամու դիակներով: «Այս կռուում սպանեց նաև իր քաջութեամբ անուն հանած թիրք Էլբաշին, իր որդու հետ միասին»,- գրում է Օնիկը⁵⁸:

Լուսաբացին Մոսուև գյուղն ամբողջովին շրջապատվում է թուրք-քրդական միացյալ զորքերով: Իսկ գյուղի հայ բնակիչները՝ կոտորածից խուսափելու համար ստիպված էին թողնել իրենց տները և հեռանալ: Քրդերը ամեն կերպ փորձում էին խոչընդոտել գյուղացիների գաղթին՝ գրոհելով հայ մարտախմբերի դիրքերի վրա: Ցավոք Գայլ Վահանը և նրա մի քանի մարտիկներ գյուղացիների ապահով անցումը կազմակերպելու ժամանակ շրջափակման մեջ են ընկնում: Կռվում են խմբապետ Գայլ Վահանը, նրա օգնական Բաբկենը, զինակիցներ Համոն և Գարեգինը: Հուլիսի 12-ի երեկոյան՝ ծանր կռիվներից հետո, ուժասպառ եղած այդ երկու մարտախմբերը նահանջում են Չընկլի բարձունքները՝ հանգստանալու և միաժամանակ խորհրդակցություն հրավիրելու նպատակով: Հիմնական խնդիրը գաղթական բնակչության ապահով սահմանացման հարցն էր: Սակայն խորհրդակցության ժամանակ լսվում են կրակոցներ և ընկնում են մի շարք ֆիդայիներ: Ցավալին այն էր, որ թուրք-քրդական զորքերի հետ միասին հարձակման էին անցել նաև ռուսական սահմանապահ զորքերը: «Այս ստոր դաւադրութեան մէջ առանձին եռանդ էր ցոյց տւել Սուրմալուի գաւառապետը, ռուս ոստիկանի բոլոր լրբութիւնները իր մէջ մարմնացնող Բօգոսլաւսկին... բայց արշաւանքի նախորդ գիշերը յուլիս 11-ին (24) հայ տէնորիստի գնդակից ընկաւ թշւատականը Իգդիրի շուկայում»⁵⁹: Գաղթականության մեջ խուճապ է սկսվում. Նրանք ենթարկվում են անխնա թալանի և կոտորածի, իսկ թուրքական սահմանամերձ զորքերի հրամանատար Սհմեդ փաշան շնորհակալություն է հայտնում սահմանապահ հրամանատար Իվանովին համերաշխ գործողության ու փայլուն հաղթանակի համար⁶⁰: Հանձնված 34 հայդուկներին ռուսները ձերբակալում և ուղարկում են Իգդիր, իսկ ապա Երևանի բանտ: 1904 թ. մարտին Երևանի նահանգական դատարանում

⁵⁸ Նույն տեղում, էջ 23:

⁵⁹ Օնիկի, նշվ. աշխ., էջ 29:

⁶⁰ Տե՛ս Համբարյան Ա., նշվ. աշխ, էջ 237:

լավում է նրանց դատավարությունը: Դատարանի վճռով նրանք ազատություն են ստանում:

Մոսուև-Ձորի արշավանքով ավարտվեց ՀՅԴ կողմից Երկիր ուղարկված արշավախմբերի սահմանանցումը: Ի՞նչն էր պատճառը, որ այլևս Երկիր ուղարկելու նպատակով կազակերպված արշավախմբեր չստեղծվեցին: Կարծում ենք, արշավախմբերի դադարեցման հիմնական պատճառը ռուսական իշխանությունների ծայրաստիճան խստությունների գործադրումն էր ռուս-թուրքական սահմանին: Չնայած արշավախմբերի դադարեցման գործում փոքր դեր չխաղաց այն հանգամանքը, որ արդեն ավարտվել էին ինքնապաշտպանական կոիվները Սասունում և Մշո դաշտի հայկական գյուղերում, բայց գլխավոր պատճառը, այնուհանդերձ, ռուս-թուրքական համագործակցությունն էր: Այդ համագործակցությունն իր առջև նպատակ էր դրել ամեն գնով ճնշել և արմատախիլ անել հայ ազատագրական շարժումը, այդ թվում նաև դրա հետ անմիջականորեն կապված ՀՅԴ արշավախմբերը:

ՀՅԴ սկզբում այնքան էլ իրական չէր համարում այդ համագործակցությունը, բայց Կայծակ Վաղարշակի և , հատկապես, Թորգոմի խմբերի ջախջախումը, ապա նաև «Մոսուև-Ձորի» արշավանքներն իրագործող հայդուկների և շուրջ 500 հայ գաղթականների նկատմամբ ռուս սահմանապահների անմարդկային վերաբերմունքն ապացուցեցին, որ հայ ազատագրական շարժումները ճիշտիս ցարական Ռուսաստանը չի խորշում անգամ ամենասանձարդկային միջոցներից: Նման պայմաններում անհնարին ու անիմաստ էր նոր արշավախմբերի սահմանանցումը: 1904 թ. սեպտեմբերի 15-ին ՀՅԴ Կովկասյան Շրջանային արտակարգ ժողովը կայացրեց որոշում. «Այլևս մարտական խումբ չուղարկել Երկիր»⁶¹: Այսպիսով, ՀՅԴ-ն շարունակում էր գենքի փոխադրման և Երկրում կենտրոնացմանի գործընթացը, բայց ոչ թե Ռուսաստանի, այլ Պարսկաստանի տարածքով, քազնի այդ ժամանակ Պարսկաստանի կառավարությունը, որպես կանոն, համեմատաբար ավելի մեղմ վերաբերմունք ուներ հայ ազատագրական շարժման հանդեպ:

Ի վերջո, ի՞նչ արդյունքներ և ճակատագիր ունեցան ՀՅԴ կազմակերպած արշավախմբերը:

1903 թ. ընթացքում ՀՅԴ Կարսի «Ջրաբերդ» կենտրոնական կոմիտեն, ելնելով Սասունի ինքնապաշտպաններին օգնելու մղումներից, կազմակերպեց և Երկիր ուղարկեց Թորգոմի «Մրրիկ» Խանի «Կայծակ» և Օնիկ Ներուզի «Շանթ» արշավախմբերը, որոնցից Սասուն հասավ միայն Թորգոմի «Մրրիկ» արշավախումբը, իսկ Խանի և Ներուզի խմբերը, կովի բռնվելով թուրքական զորքերի և քրդական աշիրեթների հետ, ջախջախվեցին Բասենի դաշտում: 1904 թ. հունիսին Վան հասնելու մտադրությամբ սահմանն անցած Փոխիկի խումբը դարձյալ ջախջախվում է: Նույն ճակատագրին են արժանանում Կայծակ Վաղարշակի «Դեռիս» և Թորգոմի «Ռրսկան» մարտախմբերը:

⁶¹ Տե՛ս Նիթեր..., հ. Բ., էջ 202:

Մոսուև-Զորի արշավանքով ավարտվում է ՀՅԴ կողմից Երկիր ուղարկելու նպատակով մարտական արշավախմբերի կազմակերպումը: Բայց հետագայում էլ շարունակվում է զինատար խմբերի միջոցով զենքի ու զինամթերքի փոխադրումը Երկիր: Պարզապես, այդ խմբերը Երկիր էին անցնում ոչ թե Կարսի, այլ Ատրպատականի գծով, իսկ զենքի ու զինամթերքի կենտրոնացումը տեղի էր ունենում ոչ թե Սասունի ու Մշո դաշտի հայկական գյուղերում, այլ Վասպուրականի ՀՅԴ <<Շամ>> Կենտրոնական կոմիտեի զինապահեստներում:

Ահա այսպիսի ճակատագիր էր բաժին ընկել 1903-1904 թթ. ՀՅԴ կողմից կազմակերպված զինատար ու մարտական խմբերին:

**Бобоев Феруз Сайфуллаевич, Содиков Фуркат Фатуллаевич
(Ташкент, Узбекистан)**

ЎЗБЕКИСТОН ССРДА СОВЕТ ТУЗУМИГА ҚАРШИ ҚУРОЛЛИ ҲАРАКАТДА МУҲОЖИРЛАРНИНГ РОЛИ

Ўзбекистон ССРда 1925-1935 йилларда совет тузумига қарши олиб борилган қуролли ҳаракатнинг ҳаракатлантирувчи кучи турли қатлам вакилларида иборат бўлган. Қуролли ҳаракат сафида ўзига тўқ бойлар, халқнинг ўрта ҳол ва камбағал тоифалари иштирок этган. Ҳаракатлантирувчи куч эса диний уламолар, эшонлар, муллалар, мударрислар, ҳарбийлар, деҳқонлар, ҳунармандлар, савдогарлар ва ишчилар қатлами бўлган.

Ҳаракат раҳбарлари асосан совет ҳокимияти ўрнатилгунга қадар қандайдир унвон ва мансабга эга ёки лавозимда ишлаган, маълум даражада халқнинг обрў-эътиборини қозона олган, маҳаллий омма орасида алоҳида нуфузга эга бўлган шахсларгина халқни ўз ортидан эргаштира билган ва ҳаракатга раҳбарлик қилган. Шунингдек, ҳарбий соҳадан хабардор, қўлида 50-100 ва ундан ортиқ йигитларга эга бўлган кишилар, уруғлар ўртасида алоҳида мавқеага эга бўлган оқсоқоллар ҳамда халқ орасида сезиларли таъсирга эга бўлган обрўли ва мартабали кишилар ўз атрофига одамларни тўплаб, ўз гуруҳларини тузиб совет тузумига қарши курашни бошлаган.

Ҳаракат раҳбарлари орасида исломий билимлардан анча кучли таълим олган шахслар ҳам бўлишган. Диний таълим кўрган ва шариаат аҳкомларини чуқур билган ҳаракат раҳбарлари қаторига Мулла Абдулқаҳҳор, Жўра Амин, Фузайл Махсум, Ёрмат Махсум, Мустафоқул каби кўрбошиларни айтиб ўтиш мумкин. Ҳаракат раҳбарлари орасида Бухоро мадрасаларида таълим кўрган кўрбошилар ҳам бўлган. Ушбу раҳбарларнинг исмига Мулла, Махсум ёки Маҳдум сўзини қўшиб айтилиши уни ислом дини қонун-қоидаларидан хабардор инсон эканлигидан далолат беради. Махсум пир ва устозларга бериладиган лақаб бўлиб, одатда уларга ўз муридлари ва шогирдлари хизмат қилишган. Махсум сўзи баъзи жойларда пир, устоз ва уламоларнинг ўғилларига нисбатан ҳам қўлланилган.

Қуролли ҳаракат сафини кенгайишида муҳожирлар ҳам таъсир кўрсатган. Улар Туркистонда совет ҳокимиятини ўрнатиш даврида ҳамда кейинги йилларда минтақада рўй берган адолатсизликлар, маҳаллий аҳолининг миллий расм-рўсмлари ва урф-одатлари билан ҳисоблашмаслик,